

**ՆԱՏԱՆՅԱՐԴԻ ՃՉՍՈՒՄԻՑ ՅԵՏՈ ԷՔՍԹԵՆՉՈՐ ԵՎ ՖԼԵՔՍՈՐ
ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ ՌԵԳԵՆԵՐԱՏԻՎ ԵՎ ԴԵԳԵՆԵՐԱՏԻՎ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԷԼԵԿՏՐԱ-
ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՄՈՐՖՈՐԻՍՏՈՔԻՄԻԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Մինասյան Ա.Լ.¹, Ազնաուրյան Ա.Վ.², Մելիքսեթյան Ի.Բ.³,
Չավուշյան Վ.Ա.³, Սարգսյան Վ.Յ.³, Սարգսյան Ջ.Ս.³**

¹ Երևանի պետական բժշկական համալսարանի տոպոգրաֆիկ անատոմիայի և օպերատիվ վիրաբուժության ամբիոն, Երևան, Հայաստան

² Երևանի պետական բժշկական համալսարանի հյուսվածաբանության ամբիոն, Երևան, Հայաստան

³ ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ, Երևան, Հայաստան

Տարբեր ժամկետներում, առնետների մոտ նստանյարդի ճզմումից հետո Ca²⁺ կախյալ թթու ֆոսֆատազայի ակտիվության բացահայտման մեթոդով, կատարվել է համեմատական մորֆոհիստոքիմիական ուսումնասիրություն:

*Երկու ժամ անց, վսասվածքի հատվածում դիտարկվել է ֆերմենտային ակտիվության կտրուկ նվազում, իսկ 5 օր անց՝ ակտիվության վերականգնում՝ սկսած պրոկսիմալ հատվածից. դիտվում է նաև նյարդի դիստալ-հատվածի վերականգման միտում: Շվանյան բջջի բավարար պրոլիֆերացիան և բջիջների Էնդոնևրիան նկատվում է ճզմումից 13 օր անց, իսկ 35 օր անց՝ ֆերմենտային ակտիվության վերականգնում՝ միայն նյարդաթելերի էքսթենզոր խրճում (*n.peroneus communis*): Նստանյարդի ճզմումից 70 օր անց նյարդաթելերի խրճերի և նրանց կողմնային կոլատերալների միջև հայտնաբերվել են կապող հյուսվածքների շերտավորումներ, որոնք շրջապատում են հարևան մկանները: Մորֆոհիստոքիմիական ուսումնասիրությունների արդյունքների հաստատման համար, էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտություններում, նստանյարդի էքսթենզոր և ֆլեքսոր (*n. gastrocnemius*) ճյուղավորումների խթանման պայմաններում, ողնուղեղի մոտոնեյրոնների միայնակ ակտիվության գրանցման և մաթեմատիկական վերլուծության միջոցով բացահայտվել է դրդիչ հետստիմուլային ռեակցիաների պրոգրեսիվ աճ, որն ի տարբերություն էքսթենզորի՝ ֆլեքսոր նյարդի համար չի հասնում նորմային: Արգելակիչ ազդեցությունները՝ էքսթենզոր նյարդի համար, գրեթե երկու անգամ գերազանցում են նորմայի մակարդակը, որը ենթադրում է պրոտեկտորային ազդեցության հնարավորություն: Տվյալները նախատեսում են դեղագործական պրոտեկցիայի անհրաժեշտություն՝ վսասված նյարդի վերականգման գործընթացի արագացման համար:*